

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ**

**ԴԱՎԹԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ
(Հ Ջ Հ Ծ)**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀՋՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից:

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Գրիգոր Վարդանյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 29-12-2016թ., թիվ 32 որոշմամբ
(նիստի ամսաթիվը, ամիսը, տարին, որոշման համարը)

Գ. ԴԱՎԹԱՇԵՆ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ուղերձը	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	8
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	22
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	24
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	30
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	33
3.1 Համայնքի զարգացման տեսլական	33
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	33
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	41
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	41
6. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում.....	42
7. ՀՀԶԾ իրականացումը	42
8. ՀՀԶԾ գնահատում	43
9. ԵԶԲԱՓԱԿՈՒՄ	44
Հավելված 1 - Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը ...	46
Հավելված 2 -01.07.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի	56
Հավելված 3 - Հապավումների ցանկ	62
Հավելված 4 - Ծրագրերի անձնագրեր	63

1. Համայնքի ղեկավարի ուղերձը

ՀՀ Արագածոտն մարզի Դավթաշեն համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԲԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2016 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառույցները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և

ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ:

ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Դավթաշեն համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի բնդհանուր նկարագրություն

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱԿ

Դավթաշեն գյուղը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզում՝ Արագած լեռան ստորոտի հարավ – արևմտյան մասում:

Դավթաշեն (նախկին Այլանլու) բնակավայրը վերաբնակեցվել է 1920թ-ին Արևմտյան Հայաստանից տեղահանված սասունցիներով: Գյուղը սահմանակից է Աշնակ, Կաթնաղբյուր, Իրինդ, Վ. Սասնաշեն գյուղերին: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1675մ բարձրության վրա: Գյուղի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր հաղորդակցման տեսակետից, քանի որ նրա կողքով անցնում է միջպետական Երևան-Թբիլիսի մայրուղին:

Գյուղը ապահովված է խմելու ջրով: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեվական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է +17,+18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ է, կարկտահարութ-յուն, երաշտ, ցրտահարություն հաճախակի է լինում: Տեղումները չափից պակաս են լինում, որից տուժում է գյուղացին:

Բնական լանդշաֆտները սելահողային տափաստաններ են:

Բնակիչների մեծ մասը տեղափոխվել է Սասունից 1916-1920 թթ-ին: Համայնքը 1926 թ-ին ունեցել է 266, 1939 թ-ին՝ 413, 1959 թ-ին՝ 563, 1979 թ-ին՝ 710, 2016թ. 817 հայ բնակիչ: Ունի դպրոց, գրադարան, մշակույթի տուն, մսուր մանկապարտեզ, կենցաղի տուն: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, բազմամյա տնկարկներ: Չբաղվում են բանջարաբուստանոցային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1715,25հա, որոնց մեջ 1231,86 հա կազմում են արոտավայրերը, 205,57հա՝ վարելահողերը, 8,79հա՝ խոտհարքերը, 133,90հա այլ հողատեսքեր, 85,82հա տնամերձ հողերը, 2,85հա հասարակական հողերը, 11,96հա ընդհանուր օգտագործման հողերը, 9,49 այլ հողեր, 0,02հա արդյունաբերության հողերը, 10,49 գյուղատնտեսության հողերը, 0,05հա էներգետիկայի հողերը, 3,90հա տրանսպորտի հողերը, 0,19հա կոմունալհողերը, 2,49հա պատմական և մշակույթի հողերը, 1,09հա գետեր, 6,78հա ջրամբար: Համայնքում զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, ոչխարաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելուրվում է ոռոգման ջրի, խմելաջրի ջրագծերի, սելավատար առուների, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, կոմունալ ցանցի կառուցումը:

Սակերես՝ 17.1525կմ²


Բնակչություն՝ 817

Աղյուսակ 1. Համայնքի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային

տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Դավթաշեն	1715,25	817	773	219	210

Համայնքի առկա բնակչության թվաքանակը և սեռատարիքային կազմը ներկայացված է ստորև բերված գրաֆիկում.



Գրաֆիկ 1.

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

մարդ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կին	Տղամարդ
1	2	3	4	5
1	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	773	391	382
2	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	95	55	40

3	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	2	0	2
4	Հաշմանդամներ, այդ թվում՝	21	5	16
5	Մանկուց հաշմանդամներ	4	2	2
6	Առկա տնային տնտեսությունների թիվը	210		
7	Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	51		
8	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	3		
9	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը,	70		
10	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	150		

Համայնքը զբաղեցնում է 1715,25հա տարածք, որի դասակարգումն ըստ նպատակային նշանակության ներկայացված է հավելված 1-ում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև N 22

հողային ֆոնդի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01.07.2016 թ.)

Մարզ

Արագածոտն

2

(անվանում)

(Կող)

Համայնք

Դավթաշեն

48

(անվանում)

(Կող)

(հեկտարներով)


NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կողմ NN	Սեփականության սուբյեկտ											Օտար սեփականատեր-հ. կառավարող
				Ընդամենը (2+3+4+8+12)	ՀՀ քաղաքացիների	ՀՀ քաղաքացիական անձանց	համայնքային				պետական				
							ընդամենը (5+6+7)	արված ամիսատույց օգտագործման	արված փարձակաբաժնի	օգտագործման և փարձակաբաժնի չտրված	ընդամենը (9+10+11)	արված ամիսատույց օգտագործման	արված փարձակաբաժնի	օգտագործման և փարձակաբաժնի չտրված	
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	
1.1	1. Գյուղատնտեսական	✓ վարելահող		205.57	172.23		25.38			25.38	7.96			7.96	
1.2		բաժնի տնտեսություն													
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի													
1.2.2		խաղողի այգի													
1.2.3		այլ բազմամյա													
1.3		✓ խոտհատք		8.79			0.68			0.68	8.11			8.11	
1.4		✓ արոտ		1231.86	0.70		696.53		0.90	695.63	534.63		110.00	424.63	
1.5		✓ այլ հողատեսքեր		133.90			97.60			97.60	36.30			36.30	
		Ընդամենը		1580.12	172.93		820.19		0.90	819.29	587.00		110.00	477.00	
2.1.1		2. Բնակավայրերի	✓ բնակելի		85.82	85.16	0.66								
2.1.2			այդ թվում՝ տնամերձ		85.82	85.16	0.66								
2.2			✓ այլ գործնական (ամառ-մ)												
2.3			✓ խառնարկային		2.85	0.60	0.11	1.33			1.33	0.81	0.81		
2.4			✓ խառն նախագաղապատման												
2.5			✓ ընդհանուր		11.96			11.95			11.95	0.01			0.01
2.5.1	✓ այլ հողեր			9.49			9.49			9.49					
2.5.2	Ընդամենը			110.12	85.76	0.77	22.77			22.77	0.82	0.81		0.01	
3.1	3. Արդյունաբերության, փոխադրության, առևտրային նշանակության		✓ արդյունաբերության		0.02			0.02			0.02				
3.2			✓ գյուղատնտեսական		10.49	0.14	1.50	8.85			8.85				
3.3		պահեստադամների													
3.4		ընդամենը													
3.4.1		Ընդամենը		10.51	0.14	1.50	8.87			8.87					
4.1	4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կապի, կոմունալ	✓ էներգետիկայի		0.05			0.05			0.05					
4.2		կապի													
4.3		տրանսպորտի		3.90							3.90			3.90	
4.4		կոմունալ		0.19			0.19			0.19					
4.4.1	Ընդամենը		4.14			0.24			0.24	3.90			3.90		
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր													
5.2		արդյունաբերական													
5.3		համազգային													
5.4		պատմական և	✓	2.49			0.71			0.71	1.78			1.78	
5.5	Ընդամենը		2.49			0.71			0.71	1.78			1.78		
6	6. Համայնքային նշանակության	Ընդամենը													
7.1	7. Անտառային	անտառ													
7.2		բնակավայր													
7.3		վարելահող													
7.4		խոտհատք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
7.7		Ընդամենը													
8.1	8. Ջրային	գետեր		1.09							1.09			1.09	
8.2		ջրամբարներ		6.78							6.78			6.78	
8.3		լճեր													
8.4		ջրամբարներ													
8.5		հիդրոէներգ. և ջրամբար. այլ													
8.6	Ընդամենը		7.87								7.87			7.87	
9.1	9. Պահուստային	արդյունաբերական													
9.2		ավազաններ													
9.3		ճահիճներ													
9.4		այլ անօգտագործելի													
9.5		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				1715.25	258.83	2.27	852.78		0.90	851.88	601.37	0.81	110.00	490.56	

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

1.	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն	2016թ. համայնքի ընդհանուր բյուջեն կազմել է 18932.9 հազ. ՀՀ դրամ (տասնութ միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար ինն հարյուր ՀՀ դրամ), 2017թ. նախնական բյուջեն կկազմի 20308.6 հազ. ՀՀ դրամ (քսան միլիոն երեք հարյուր ութ հազար վեց հարյուր ՀՀ դրամ)
2.	Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%)	2016թ. համայնքի տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները կազմում են 16960.9 հազ. դրամ, որի մեջ համայնքի սեփական եկամուտները կազմում են 22.01 %, իսկ 2017թ. բյուջեի եկամուտները նախատեսվել են 16737.8 հազ. դրամ, որի մեջ համայնքի սեփական եկամուտները կազմում են 21.2%: Տոկոսային առումով սեփական եկամուտների բաժինը ընդհանուր եկամուտների մեջ 2017թ. նվազել է 2016թ. համեմատ:
3.	Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները և արդյունաբերական արտադրանքը, հիմնական սպառման շուկաներ	Համայնքի վարչական տարածքում գործում է գյուղատնտեսական տեխնիկայի մեկ կայանատեղի(գարաժ), որտեղ կազմակերպվում է նաև բետոնյա կոնստրուկցիաների արտադրություն, որոնք օգտագործվում են գյուղատնտեսության մեջ: Այն հնարավորություն է տալիս բնակչությանը մասնակի ապահովել աշխատատեղերով: Բետոնյա կոնստրուկցիաները սպառվում է տեղական շուկայում:
4.	Ծառայությունների ոլորտի համայնքի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները	Համայնքի տարածքում գործում են անհատ ձեռներեցների պատկանող 2 խանութներ, որոնք հիմնականում փոքր խանութներ են և զբաղվում են խառը ապրանքների /սնունդ, տնտեսական ապրանքներ և այլն/ վաճառքով:

5.	Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ	Համայնքի հողերն անջրդի են: Այդ պատճառով համայնքը դժվարությամբ է կազմակերպում գյուղ. մթերքների արտադրությունը: Մեծ չարչարանքների, նյութական ու դրամական կորուստների գնով չնչին արդյունքներ են ստացվում: Անասնապահության բնագավառում հիմնականում պահում են կովեր, ոչխարներ, թռչուններ, զբաղվում են նաև խոզաբուծությամբ ու մեղվապահությամբ: Համայնքն ունի արոտավայրերի պակաս, ինչն էականորեն ազդում է անասնապահության վրա: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, առվույտի, կորնզանի մշակմամբ: Իրենց պատկանող տնամերձ հողերում մեծամասամբ մշակում են ծիրանենի, կեռասենի, բալի, սալորենի, խնձորենի և ընկուզենի ծառեր: Տարերային աղետների պատճառով հաճախացել է բերքի կորուստները: Խիստ կարիք կա գյուղ. տեխնիկայի, որի ձեռք բերումը շատ դժվար է թանկ լինելու պատճառով: Համայնքում առկա տրակտորների թիվը 5-ն է, որոնք հնամաշ են: Համայնքը չունի հակակարկտային կայաններ:
7.	Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր	Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը վերջին անգամ մասնակի վերանորոգվել է 2015թ.-ին և գտնվում է բավարար վիճակում: Այն նախատեսված է 180 աշակերտի համար: Ներկայումս սովորում են 85 աշակերտներ: Դպրոցն ունի 20 ուսուցիչներ և տեխ. սպասարկող անձնակազմ՝ 6 հոգի: Համայնքում 2015 թվականից գործում է տարվա կտրվածքով 6ամիս ժամկետով մսուր մանկապարտեզ ֆինանսավորում չլինելու պատճառով: Մսուր

		մանկապարտեզը վերանորոգված է մասնակի:
8.	Առողջապահական հաստատություններ	Համայնքում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է համայնքապետարանի մասնաշենքում և որտեղ առկա է համապատասխան գույք: Բուժկետն ունի մեկ բուժ. քույր:
9.	Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված են 51 ընտանիքներ՝ 2016 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ, ինչը համայնքի ընդհանուր ընտանիքների թվի մեջ կազմում է 23,2%: Այն պատկերված է գրաֆիկ 2-ում:



Գրաֆիկ 2. Համայնքում ընտանիքների ընդհանուր թիվը և նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (համայնքապետի) և ավագանու կողմից, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Վերջին ՏԻՄ

ընտրությունները տեղի են ունեցել 2014 թվականի հունիսի 8-ին: Համայնքի աշխատակազմում ընդգրկված են հետևյալ հաստիքները՝

-Համայնքի ղեկավար	-1 դրույք
- Աշխատակազմի քարտուղար 1.2-1	-1 դրույք
- Առաջատար մասնագետ 3.1-1	-1 դրույք
- Առաջատար մասնագետ 3.1-3	-1 դրույք
-Մշակույթի տան տնօրեն	- 0,5 դրույք
- Գրադարանավար	-0,5 դրույք
- Հավաքարար	- 0,5 դրույք

Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամներից:

Դավթաշենի համայնքապետարանի համայնքային ենթակայության <<ԴԱՎԹԱՇԵՆԻ Մ/Մ>> ՀՈԱԿ-ում ընդգրկված են հետևյալ հաստիքները՝

-Մ/Մ տնօրեն	-1դրույք
- Դաստիարակ	-0,5 դրույք
- Դաստիարակի օգնական	- 0,5 դրույք
-Խոհարար	- 0,5 դրույք
- Պահակ դռնապան	- 0,5 դրույք

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017- 2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝

պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ,

շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով

- Համայնքի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝
- Հասարակական տրանսպորտի աշխատանքի բարելավում, ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակը կանխատեսված է առաջիկա 5 տարիների կտրվածքով և հստակ երևում է, որ միայն համայնքի սեփական եկամուտներով կամ տեղական բյուջեի միջոցներով հնգամյա ծրագրում նախատեսվող աշխատանքների իրականացումը իրատեսական չէ և պետք է ներգրավվեն այլ միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

հազար դրամ

Հ/Հ	Մուտքի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատմամբ %	2017թ. 2016թ. նկատմամբ %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ %		
											2015թ.	2016թ.	2017թ.
	Ընդամենը մուտքեր	16119.9	16208.5	16737.8	18732.6	20423.7	23077.4	26092.3	100.5	103.3	100.0	100.0	100.0
1	Հողի հարկ	1121.8	1116,2	1198,0	1198,0	1198,0	1198,0	1198,0	99.9	107.3	8.8	8.9	7.2
2	Գույքահարկ	1257.5	1000,0	1510,0	1530,0	1550,0	1560,0	1570,0	79.5	151.0	7.7	8.2	9.0
3	Տուրքեր	24.0	24,0	64,0	64,0	64,0	96,0	96,0	100.0	268.6	0.2	0.2	0.2
4	Պաշտոնական դրամաշնորհներ	12741.6	13265.3	13165.8	15140,6	17411,7	20023,4	23028,3	104.1	99.2	77.6	81.9	80.4
5	Այլ եկամուտներ	975.0	800,0	800,0	800,0	200,0	200,0	200,0	82.0	100.0	9.9	4.9	4.8

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ա) ըստ գործառական դասակարգման (հազար դրամ)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատմամբ %	2017թ. 2016թ. նկատմամբ %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ %		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	16429.1	16206.5	16737.8	18732.6	20423.7	23077.4	26092.3	38.6	103.2	100	100	100
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10477.6	12091.5	13427.8	14932.6	16273.7	18677.4	21392.3	119.4	111.0	63.7	74.6	80.2
2	Պաշտպանություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
4	Տնտեսական հարաբերություններ												

5	Շրջական միջավայրի պաշտպանություն	0	0	0	200.0	300.0	300.0	300.0	0	0			
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	2091.0	2241.4	3570.8	3680.0	3800.0	3900.0	3900.0	107.1	159.3	12.7	13.8	21.3
7	Առողջապահություն	0	0							0			
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	957.3	910.0	1110.0	1200.0	1250.0	1300.0	1300.0	95.0	121.9	5.8	5.6	6.6
9	Կրթություն	2053.2	1500.0	1700.0	2000.0	2100.0	2200.0	2500.0	73.0	113.3	12.4	9.3	10.2
10	Մոցիալական պաշտպանություն	850.0	890.0	500.0	600.0	800.0	900.0	900.0	104.7	56.2	5.2	5.5	3.0
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	1500.0	815.0	1600.0	1800.0	2000.0	2300.0	2600.0	54.3	136.3	9.1	5.0	9.6
	հավելուրդ	2871.9	3570.8										

բ) ըստ տնտեսագիտական դասակարգման (հազար դրամ)

Հ/Հ	ԾԱՌՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատմամբ %	2017թ. 2016թ. նկատմամբ %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ %		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	16429.1	18932.3	20308.6	18732.6	20423.7	23077.4	26092.3	115.2	101.2	100	100	100
Ա	ԸԹԱՑԻԿ ԾԱՌՄԵՐ	14338.1	16206.5	16737.8	18732.6	20423.7	23077.4	26092.3	113.0	103.2	87.3	85.6	82.4
1	Աշխատանքի վարձատրություն	9097.9	9910.0	10267.8	11612.6	12763.7	13377.4	14792.3	108.3	103.6	55.4	52.3	50.5
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	2210.9	2975.5	2540.0	2600.0	2800.0	4500.0	5600.0	134.5	85.4	13.4	15.7	12.5
3	Տոկոսավճարներ	0	0										
4	Մուքսիդիաներ	2053.3	1500.0	1700.0	2000.0	2100.0	2200.0	2500.0	73.0	113.3	12.4	7.9	8.3
5	Դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0					

6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	850.0	890.0	500.0	600.0	800.0	900.0	900.0	104.7	56.2	5.2	4.7	2.5
7	Այլ ծախսեր	126.0	931.0	1730.0	1920.0	1960.0	2100.0	2300.0	138.8	185.8	0.8	4.9	8.5
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ	2091.0	2726.4	3510.8	3600.0	3800.0	3900.0	3900.0	130.0	1281.1	12.7	14.4	17.2
1	Հիմնական միջոցներ	2091.0	2726.4	3510.8	3600.0	3800.0	3900.0	3900.0	130.4	128.1	12.7	14.4	17.2
2	Պաշարներ	0	0	0									
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-167.3	-133.7	-180.0	-200.0	200.0	250.0	250.0	79.9	134.6	1.0	0.7	0.8
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0	0	0									
2	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-167.3	-133.7	-180.0	200.0	200.0	250.0	250.0	79.9	134.6	1.0	0.7	0.8

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ. դրամ

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. Հաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատմամբ %	2017թ. 2016թ. նկատմամբ %
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը	1500.0	815.0	1600.0	1800.0	2000.0	2300.0	2600.0	54.3	196.3

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ

Հ/Հ	ՏՐԱՆՍՖԵՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. Փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատմամբ %	2017թ. 2016թ. նկատմամբ %
	ԸՆԴԱՄԵՆԸ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	12741.6	13265.3	13165.8	15140,6	17411,7	20023,4	23028,3	104.1	99.2
1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	12741.6	13265.3	13165.8	15140,6	17411,7	20023,4	23028,3	104.1	99.2
2	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	0	0	0	0	0	0	0	0	0
3	Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար տրամադրվող նպատակային հատկացումներ (ընթացիկ սուբվենցիաներ)	0	0	0	0	0	0	0	0	0

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Այս ենթաբաժնում նկարագրված է համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարությունները: Դիտարկվել են զարգացման հետևյալ ուղղություններում առկա դժվարությունները.

- **գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը,**

Համայնքը փոքր է և բիզնեսի զարգացումը բարձր մակարդակի վրա չէ: Համայնքը հիմնված է հիմնականում տնտեսությունների վրա, որոնց փոխհարաբերությունները համայնքի ղեկավարի և ավագանու հետ գտնվում են բարձր մակարդակի վրա:

- **համայնքի գույքի կառավարումը,**

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ: Հետագայում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համալրվել է նոր կառուցված նախակրթարանի սենյակով /2010թ./, որը գտնվում է մշակույթի տան հյուսիս արևելյան մասում: Համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ընդհանուր վիճակը կարելի է համարել բավարար, սակայն համայնքի զարգացման համար անհրաժեշտ է հետևողականորեն վերակառուցել, վերափոխել ենթակառուցվածքները: Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակի գնահատումը տրված է աղյուսակ 1-ում:

նախադպրոցական հիմնարկ

մշակույթի տուն

գրադարան

սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ

հանգստի գոտիներ

ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ

ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ

վարչական շենքեր

ներհամայնքային փողոցներ և հրապարակներ

ներհամայնքային նշանակության ճանապարհներ

ներհամայնքային կամուրջներ

պատգամավորների նախկին գյուղական խորհրդի գործկոմին

պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Համայնքապետարանի վարչական շենք		1978		անբավարար	Կապիտալ վերանորոգման	Ծածրը ամբողջությամբ վթարային է
2.	Մշակույթի տուն		1980		լավ	Ներքին վերանորոգում	
3.	ՕԿՁ		1978		Բավարար	-	
4.	Քլորակայան				չկա		
5.							
5.							
6.	Գերեզմանոց				լավ		
7.	Խմելու ջրի ջրագիծ		2001	երկարություն 17 կմ	բավարար	պարբերական վերանորոգումներ	

- **նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.**

Համայնքում 2014 թվականից գործում է մսուր մանկապարտեզ: Մսուր մանկապարտեզ են հաճախում 3-6 տարեկան երեխաները:

- **ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ.**

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1980թ.-ին, կատարվել են մասնակի նորոգման աշխատանքներ և կարիք ունի կապիտալ վերանորոգման: Գյուղի գրադարանը գտնվում է մշակույթի տանը, որն ունի 7004 կտոր գրականություն: Համայնքում չեն գործում մշակութային և մարզական խմբակներ անհրաժեշտ պայմաններ չունենալու հետևանքով:

- **համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը,** Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է և անասնապահությունը: Համայնքի հող ունեցող բնակչության մի մասը չի զբաղվում հողագործությամբ՝ բավարար պայմաններ չունենալու և արդյունք չստանալու պատճառով: Համայնքն ունի նաև

արոտավայրերի խնդիր, ինչն էլ իր հետքն է թողնում անասնապահության վրա: Համայնքում խմելու ջուրը չի բավարարում հատկապես աշնանային և ձմեռային ամիսներին, կա խմելու ջրի լրացման անհրաժեշտություն: Արտագնա /սեզոնային/ աշխատանքի մեկնողների թվաքանակը 2016թ. կազմել է 68 մարդ: Փարոս համակարգում ընդգրկված են 51 ընտանիքներ՝ 2016 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ:

- **Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը,**

Համայնքում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է համայնքապետարանի շենքում, որը ապահովված է համապատասխան գույքով: Բուժկետն ունի մեկ բուժ. քույր:

Համայնքում սպորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում դպրոցին պատկանող սպորտդահլիճը, սակայն այն ապահովված չէ անհրաժեշտ գույքով:

Համայնքն ունի ֆուտբոլի դաշտ, որտեղ պարբերաբար անց են կացվում ֆուտբոլային խաղեր:

- **համայնքում բնակարանային շինարարության խթանումը,**

Բնակելի ֆոնդը բաղկացած է 9բազմաբնակարան բնակելի շենքերից և 159 առանձնատներից: Զգալի է առանձնատների կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների թիվը:

- **համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքի գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,**

Համայնքն չունի առանձնացված տարածք աղբանոցի համար, համայնքի աղբահանության, համայնքային գերեզմանատան պահպանման և գործունեության ապահովման համար կատարվում են անհրաժեշտ միջոցառումներ,

- **համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.**

Համայնքի տարածքով է անցնում Երևան-Գյումրի մայրուղին, ինչպես նաև Ն. Սասնաշեն, Վ. Սասնաշեն, Վ. Բազմաբերդ, Ավթոնա գյուղեր տանող միջհամայնքային

ճանապարհը, որը ասֆալտապատ է: Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են /մի մասը խճապատ/, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 10 կմ է:

Դաշտամիջյան ճանապարհները գրունտային են, որոնց վիճակը բավարար չէ:

- **պետության պաշտպանության իրականացման աջակցումը,**

Բանակում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվում են 12 մարդ, իսկ պայմանագրային զինծառայողները 5-ն են:

- **աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,**

Համայնքում ռիսկային է համարվում տարերային աղետները /կարկուտ, սելավներ, ուժեղ քամիներ, ձնաբքեր, ցրտահարություններ, երաշտներ և այլն/: Համայնքը չունի հակակարկտային կայան: Արտակարգ իրավիճակներում բնակչությանը թաքստոցներում պատսպարելու համար առանձնացվել է տարածք, սակայն դեռևս այն կառուցված չէ: Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում:

- **գյուղատնտեսության զարգացման խթանումը,**

Համայնքի հողերն անջրդի են: Այդ պատճառով համայնքը դժվարությամբ է կազմակերպում գյուղ. մթերքների արտադրությունը: Մեծ չարչարանքների, նյութական ու դրամական կորուստների գնով չնչին արդյունքներ են ստացվում: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, առվույտի մշակմամբ:

Գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները, ռոռզման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքների արձագանքելու անհրաժեշտ օղակների թերզարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը /ագրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական/ և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեի զգալի մասը ձևավորվում է հողի հարկից, պոտենցիալ հարկատուների տնտեսական վիճակը ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Իհարկե չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ հարցը առնչվում է նաև զբաղվածության, պարենային և այլ կարևորագույն խնդիրների հետ:

Անասնապահության բնագավառում հիմնականում պահում են կովեր, ոչխարներ, թռչուններ: Տարերային աղետների պատճառով հաճախացել է բերքի կորուստները: Խիստ

կարիք կա գյուղ. տեխնիկայի, որի ձեռք բերումը շատ դժվար է թանկ լինելու պատճառով:
Համայնքում առկա տրակտորների թիվը 5-ն է, որոնք հնամաշ են:

Համայնքը չունի հակակարկտային կայաններ:

- **համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը,**

Համայնքում կան ջրամբարներ: Մեծ ջրամբարի տարողությունը կազմում է 250000մ³: Ջրամբարը սնվում է սելավաջրերից: Ջրամբարների մաքրությունը ապահովելու համար անհրաժեշտության դեպքում իրականացվում են մաքրման աշխատանքներ:

- **համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում,**

Համայնքի մշակույթի տունը գտնվում է շատ վատ վիճակում, որտեղ տեղակայված է գրադարանը: Այն ունի վերանորոգման կարիք:

- **համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը,**

